

Հոմանուն անուամբ մի եւ իրաւք այլ՝ նշանակեաց զբաղմանունն, որք են իրաւք մի եւ անուամբ այլ, որպէ՛ս սուսեր, նրան, դաւալը, վաղակաւորը:

անուան Հաղորդին եւ ըստ իրաց զանազանին՝ եւ գոյանան հոմանունքն, եւ կամ ըստ իրաց Հաղորդին եւ ըստ անուան զանազանին՝ եւ լինին բաղմանունքն՝ որպէս խաղ, դաւալը, մարտացու, վաղակաւոր, սուսեր, նրան:

Յովնանէս Որոտնեցի:

Էլիաս, էջ 81, 14-27:

“Ըստ Աւլամպիադորոսի է այսպէս. յեակայն է ինչ որ ըստ գոյացութեան է եւ է որ ոչ է ըստ ինքեան: Իսկ ըստ ինքեան է, որ ըստ բաժանման է եւ է որ ոչ է ըստ բաժանման: Արդ՝ որ ըստ ինքեան է ըստ բաժանման՝ առնէ զորակն, իսկ որ ոչ է ըստ ինքեան՝ կամ կալումն միայն է կամ ըստ կալման այոցն իմանի: Արդ՝ որ կալումն միայն է առնէ զառինչն, եւ որ ըստ կալման այոցն են՝ առնեն զվեց ստորագութեանն, որ է սոյնպէս. ի գոյացութեանն եւ ի քանակէն լի ի ուրն եւ երբն, ի գոյացութեանն եւ յառնէն լինի կարն եւ ունէն, ի գոյացութեանն եւ ի յորակէն լինին առնեին եւ կրեին:

“Իսկն կամ նենթակայն է կամ ոչ նենթակայում: Եւ եթէ ոչ նենթակայում՝ առնէ զգոյացութիւն, իսկ եթէ նենթակայում՝ կամ ըստ ինքեան է կամ ոչ ըստ ինքեան: Եւ եթէ ըստ ինքեան է՝ կամ բաժանելի է կամ անբաժանելի: Եւ եթէ բաժանելի է՝ առնէ զքանակն, իսկ եթէ անբաժանելի է՝ առնէ զորակն. քանզի թէպէտ եւ կարծի բաժանելի գոլ որակն, այլ սակայն վասն նիւթոյն է բաժանելի, իսկ եթէ ոչ ըստ ինքեան՝ կամ կալումն միայն է եւ առնէ զառինչն, եւ կամ ըստ կալման այլոց իմանի՝ եւ լինին վեց ստորագութիւնքն. քանզի չորեք երոց պարզ ստորագութեանց՝ գոյացութեան, քանակի, որակի, առնելի՝ ի շարամանութենէ օոցա այլ ստորագութեանքն ծնանին. յեւթեան է ի քանակէ՝ ուր եւ երբն, յեւթեան է յորակութեան՝ առնելն եւ յառնելն՝ ունեին եւ կալն:

Յովնանէս Որոտնեցի:

Էլիաս, էջ 88, 25 նւն:

“Ասէ Աւլամպիադորոս թէ ստորագութեան յեղանակք երեք են. է որ ըստ բնութեան եւ է որ ոչ է ըստ բնութեան եւ է որ ըստ պատահմանն նւն:

“Քանզի Ստորագութիւն եռակի է կամ ըստ բնութեան կամ ոչ ըստ բնութեան կամ ըստ պատահմանն նւն մինչեւ 89, 8:

Յովնանէս Որոտնեցի:

Էլիաս, էջ 114, 23 նւն:

“Իսկ քանակն զի նախադաս եղեւ որակին, գնէ պատճառ Աւլամպիադորոսն նւն:

“Ընդէր յետ գոյացութեան զքանակէ բուռն հնար: Եւ ասեմք, եթէ ըստ վեց պատճառացն նւն մինչեւ 115, 8:

1 Որոտնեցու բնագիրը տեղ տեղ աղճատուած է ու պակասաւոր:

Կարելի է առաջ բերել ուրիշ բաղմամբիւ քաղուածքներ եւս, սակայն աւելորդ է այդ որովհետեւ վերոյիշեալ հատուածների համեմատութիւնից իսկ պարզ երեւում է, որ Յովնանէս Որոտնեցին օգտուել է Էլիասին ընծայուած Ստորագութեանց մեկնութեան հայերէն թարգմանութիւնից, վերագրելով այն ոչ թէ Էլիասին, այլ Ուլիմպիոդորոս մեկնիչին:

Արդ՝ հարց է ծագում, թէ ինչ աղբիւրից է բղխում Որոտնեցու այդ վկայութիւնը: Անշուշտ՝ սխալ կը լինէր կարծել, որ Որոտնեցու տեղեկութիւնը սոսկ մի ննթագրութիւն է, հիմնուած բանասիրական համարձակ ու անհիմն հետախուզման վրայ: Ամենից հաւանականն է՝ ընդունել, որ հայերէն ձեռագիրը, որից օգտուել է Որոտնեցին, ունեցել է վերնագիր եւ այդ վերնագրում յիշուած է եղել Ուլիմպիոդորոս մեկնիչը՝ իբրեւ մեկնութեան հեղինակ:

Ներւան:

ՊՐՈՓ. Յ. ՄԱՆԱՆԻԱՆ

(Շարունակելի:)



Մ Խ Ի Թ Ե Ր Գ Օ Ճ

Մխիթար Գօշի¹ ծննդավայրն է Գանձակ՝ Ժամանակից եւ յետագայ դարերու մատենագիրներն անտես ըրած են անոր ծննդեան տարեթիւը, զոր սակայն հաւանականաբար կարելի է 1130—1140 տարիներուն մէջ ամփոփել, քանի որ մեռած է 1213 ին ալեգարդ հասակի մէջ: Կիրակոս կը յիշէ թէ անիկա «քրիստոնեայ ծնողաց զաւակ» է (Պտմ. Հոց. էջ 106), բայց թէ ինչ էր անոնց անունն ու վիճակը՝ կը թողու առանց յիշատակութեան:

Որդեանէր ծնողքը չի զանաւոր որ եւ իցէ հոգ ուշիմ մանկան եւ նորափթիթ հասակէն զնրբը

1 Իր մասին գրած են՝ Չամչեան՝ Պատմութիւն Հայոց, Վենետիկ 1786, Գ. հար. էջ 95—96, 121, 181, 183—184, 187: Somalian, Quadro della storia letteraria di Armenia, Venezia 1829, էջ 100—101: Neumann Fr., Versuch einer Geschichte der armenischen Literatur nach den Werken der Mechitharisten, Leipzig 1836, էջ 175—176: Ալիշան՝ Ներսէս Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ 1873, էջ 131: Նոյնը՝ Հայագաւորում, Վենետիկ 1901, Ա. հար. (փոքրագիր), էջ 249—263: Բատումեան Վահան Վրդ՝ Մխիթարայ Գօշի Գատաւարանի շուրջ, Վաղարշապատ 1880, էջ 1—180: Զարբհանալիստի Հայկ. հին գրութեան պատմութիւնը, Վենետիկ 1897, էջ 686—698 եւս եւս:

Իւանէ իշխանին խնդիրք մը կը ներկայացնեն, որով կ'աղերսեն անկէ ապահով եւ բարեբեր վայր մը, ուր կարենան ապրիլ եւ վանք մը կառուցանել: Իւանէ անոնց աղաչանքը կը լսէ եւ տեղւոյն ընտրութիւնը բնակութիւն հաստատողներուն ազատ կամքին կը թողու, այնպէս յօժարութեամբ կը լսէ անոնց ձայնը:

Եւ անոնք «Շրջեալ գտին տեղի վայելուչ եւ գոգաձեւ առ ստորոտս երկուց լեռանց, որ կայ ի զլիսոյ նորա, զոր անուանեն զտեղին Տանձուկաձոր եւ էր ի նմա գիւղ» (Կիր., էջ 108, «Տանձուկաձոր» պէտք է կարդալ «Տանձուտաձոր»): Հոս յառաջ կը տան իր խօսքը Կիրակոս «Սկսաւ այնուհետեւ վարդապետն սքանչելի հանդերձ միաբանօք իւրովք ձեռն ի գործ արկանել շինութեան»: Պատմագրին այս խօսքերէն հաւաստեալ կը հետեւի թէ նոր Գետիկի հիմնադիրն եւ թերեւս առաջնորդն է Մխիթար Գօշ: Ապագայ սերունդը նոր Գետիկի կու տայ ուրիշ անուն մ'ալ, այս է՝ Գօշայ վանք:

Մխիթար Տանձուտի մէջ քրտնաջան աշխատութեամբ բարձրացնել կու տայ փայտակերտ գեղեցկաշէն եկեղեցի մը յանուն Գրիգոր Լուսաւորչի, ապա կը կառուցուի փոքրիկ եկեղեցի մը ի պատիւ Յովհաննու Կարապետի: Առաջնոյն տօնախմբութեան մասնակից եւ Մխիթարայ խօսակից կ'ըլլայ Հաղարծին վանքի երաժիշտ առաջնորդը Խաչատուր Տարօնեցին:

Ասկէ վերջ Գօշ կը սկսի հիմնական գործերու: 1190ին հիմ կը դրուի եւ չորս տարիէն գլուխ կ'ըլլէ Գետկայ մեծափառ մայր եկեղեցին, որ կոփածոյ քարերով կը հիւսուի եւ գեղեցկաշէն երկնամասն գմբէթով մը կը պսակուի: Այսպիսի գեղեցկակերտ մը շինել տալու վիճակի մէջ էր Գանձակեցի վարդապետը, որովհետեւ ունէր մեծահարուստ բարերարներ: Ձեռնտու կը գտնուին Բիւրտ իշխանին դաւանները՝ Գաւիթ եւ Սադուն: Խաչեցի վախտանգ իշխանն իր Գրիգորիս, Գրիգոր վասակ եւ Խոյդան եղբայրներուն հետ կը նպաստէ թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս: Ասոնցմէ զատ Կիրակոս կը յիշատակէ ուրիշ անուն մ'ալ, որ նոյն դարուն իրրեւ բարերար ճանչցուած է եւ այդ է Արզու խաթուն՝ դուստր Բիւրտ իշխանի, կին Հաթերքի վաղմանք իշխանին: Կիրակոս բարեպաշտ տիկնոջ մասին կը գրէ «Սա բազում ինչ օժանդակ եղեւ, արար եւ վարագոյր գեղեցիկ՝ դստերովք իւրովք՝ ծածկոյթ տուր խորանին, զարմանալի տեսողաց, ի մազոյ այծիցն կակղաքունից, ներկեալ պէսպէս եւ զանազան գործ գնդակակերպ (մեր թ., 124 Ձեռաւ

գիրն ունի «քանտակերպ» այս է «քանդակակերպ») եւ նկարեալ պատկերօք ճշգրտագոյն հատուածովք տնօրինականօք փրկէին եւ այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսողն» (էջ 111):

Մեծահանգէս կը կատարուի Գետիկի այս փառաշքեղ եկեղեցւոյն նաւակատիքը: Հոն կը դիմեն Հաղբատու առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոսը եւ խուռն բաղմութիւն մը քահանաներու եւ հաւատացեալներու: Եկեղեցին կ'օծուի հաւանականաբար Յովհաննէս Հաղբատացիէն եւ կը կնքուի յանուն Ս. Աստուածածնի: Կը շինուի եկեղեցւոյն գաւիթն ալ կոփածոյ քարերով: Այս անգամ օգնութեան հասնողներու մէջ աչքի կը զարնեն Չաքարէ Սպասալար զօրավարն ու իր եղբայրն Իւանէ: Ասոնք եկեղեցւոյն հաստութեաբ աղբիւրներ կը շէնակեն. «Եւ ընծայեցին եկեղեցւոյն սահման ջրադարձիւք լեռնէ ի լեռն եւ բով մի յԱբասաձոր եւ զՇորաձորն ի նահանգին Բջնոյ եւ զՕշավա ի գլուխ վանացն» (Կիր., էջ 112):

Գօշ թէեւ կը շինէ այսպիսի փառաւոր եկեղեցի մը եւ վանք մը, սակայն ինքը հոն չի բնակիր: Նա կը սիրէ անապատ ու ամայութիւն, որպէս զի հեռու աղմկէ, հեռու խռովութենէ կարենայ անդու նուիրուիլ իր մտքին ու սրտին ցանկութիւններուն: Վանքէն հեռու բնակավայր մը շինել կու տայ, քովն ալ կը կառուցանէ փոքրիկ եկեղեցի մը յանուն Ս. Հոգւոյն եւ հոն իր օրերը կ'անցնէ:

Այս շինութիւններու վրայ ծերութեան ժամանակը կ'աւելցնէ ուրիշ եկեղեցի մը՝ բաղձալով որ հոն հանգչին իր յոգնած անգամները: Այս եկեղեցւոյն կամ մատրան անունը կը դնէ Համբարձման եկեղեցի:

Մխիթար Գօշի շինել տուած այս հաստատութիւններն ամէնքն ալ գեղեցիկ են եւ պատիւ կը բերեն բոլոր այն ճարտար անձինքներու, որոնք անոնց վրայ իրենց հանձարն ու յոժը սպառած են: Անոնք դեռ մինչեւ այսօր, թէեւ մեծապէս տուժած իրենց հմայքը, կը մնան մէյ մէկ վկաներ Մխիթարայ անկուն նկարագրին: Մխիթար իր այս ձեռնարկներովը օրինակ եղաւ մեծագործութեան, իր քայլերուն հետեւեցան իր աշակերտներէն մի քանին ալ, մանաւանդ Մարտիրոս վարդապետ առաջնորդը, սակայն հետեւորդ դարերը

¹ Կիրակոս կրնար այսպէս մանրամասն գրել, որովհետեւ եղած է միաբան Նոր Գետիկի:

² Հրաշալիքներ են հոս գտնուած երկու խաչքարերը, որոնց պատկերները գրուած են «Մարա» թերթի մէջ 1893, Գիրք Ա. Ետեւ նկարներու եւ քանդակներու շարքին մէջ:

մութեան մէջ էր: Զաքարէ Սպասալար, Իւսանէ իշխան, Քիւտ իշխան, Վախտանգ իշխան եւ ասոնց ընտանիքներն ու ազգականներն անոր հետ միշտ սիրով վարուած են եւ անոր ձեռնարկներուն նիւթական ու բարոյական աջակցութիւն ընձեռած:

Բայց Մխիթար ամէնէն աւելի յարաբերութեան մէջ էր Զաքարիա ապասալարին հետ, զերջինս զՄխիթար մեծապէս կը յարգէ իր հրմութեան համար եւ զինքը կ'ընտրէ իր խոստովանահայրն ու խորհրդատուն: Կարեւոր հարցի մը համար Զաքարիա կը կարօտի անոր խորհրդին: Կը բաղձայ անիկա ունենալ «եկեղեցի ի ծանապարհի» (Կիտ. էջ 81), այս է ունենալ իր բանակին մէջ քահանաներ, որոնք կարենան ամէն տեղ խորան կանգնել եւ պատարագ մատուցանել: Ուստի կը հարցնէ Գօշի «Ո՞չ երբեք եղեալ է թագաւորաց մերոց կամ իշխանաց ի պէտս ծանապարհաց եկեղեցի՝ տեղի պաշտաման եւ պատարագի»: Մխիթար քանի մը վարդապետներու հետ, որոնց եւս Սպասալարը դիմած էր, կը ծանուցանէ անոր թէ այսպիսի սովորութիւն մը երբեք մեր ազգին մէջ գտնուած է, սակայն ապա բարձուած եւ թէ վերսկսելու համար պէտք է դիմել կաթողիկոսին եւ թագաւորին, երկուքն ալ ի Կիլիկիա: Շահնշահն (Զաքարիա) առանց ժամանակ կորսնցնելու թուղթ մը կը հասցնէ Կիլիկիա՝ իր բաղձանքին յագուրդ մը գտնելու լիակատար յուսով: Իրաւորը Սիս ժողովքի մը մէջ կը շնորհեն անոր խնդրելին, բայց այդ արտօնագրին հետ կը զրկեն ի ձեռն հրեշտակներու մի քանի կանոններ ալ, որոնք բաւական խնդրոյ նիւթ կը բանան արեւելեան եպիսկոպոսներու եւ վարդապետներու մէջ:

Զաքարիա Կիլիկեցիներու զրկած անձինքներու ժամանումէն վերջ Լօռիի մէջ ժողովք մը գումարել կը հրամայէ (1205ին), ուր կը հրաւիրէ ժամանակին նշանաւոր դէմքերէն մեծ մաս մը: Ասոնցմէ են՝ Գրիգորիս եպիսկոպոս Հաղբատու, Սարգիս աթոռակալ Անւոյ, Վրթանէս եպ. Բջնոյ եւ Դանոյ, Թովհանէս եպ. Կարուց, Իգնատիոս, Վարդան, Դաւիթ, Մխիթար Գօշ, Թովհանէս Սանահնեցի, Գրիգոր Մանմանիկ, Գրիգոր Դունեցի, Եղիա Հաւոց-Թառնէ եւ Սարգիս Սեւանցի վարդապետները: Ժողովականներն իրարու հետ չեն միաբանիր եւ մեծամեծ երկպառակութեանց դուռ կը բացուի: Որքան կ'երեւայ անմիաբան կը գտնուին գլխաւորաբար Ս. Կիւսի վե-

րափոխման տօնախմբութեան օրւան նկատմամբ: Վասն զի կաթողիկոսէն եւ Սոյ ժողովքէն հրահանգ եկած էր այդ տօնը կատարել Օգոստոս 15ին, ինչ օր ալ պատահի: Հակառակապատճառութիւններն ու վէճերն երթալով կը սաստկանան եւ ժողովականներէն մաս մը կը փախչի կ'երթայ: Ժողովքը կը փակուի:

Շահնշահը տեսնելով որ մեղմօրէն անհնար կը դառնար հասնիլ իր նպատակին՝ այս է կաթողիկոսին բոլոր որոշումներուն լրացում տալ, կը սկսի բռնութեան: Կը հրամայէ վերափոխման տօնախմբութիւնն Օգոստոս 15ին (որ օրն ալ գայ) եւ այս որոշման Հաղբատու Գրիգորիս եպիսկոպոսը հաւանեցնելու դիտումով Հաղբատ կ'առաքէ կաթողիկոսին հրեշտակը Մինաս եպիսկոպոսը: Գրիգորիս երբ այս հրամանին հասու կ'ըլլայ՝ Մինասի դէմ կը զրկէ մի քանի հոգի, որոնք անոր վրայ կը յարձակին, կը գանակոծեն եւ ուրիշ անտեղի գործքեր կը կատարեն: Բնականաբար Զաքարիա այս եղելութեան վրայ կը զայրանայ: Մարդ կ'առաքէ զԳրիգորիս կալանաւորելու, բայց անիկա գիտնալով որ Շահնշահը սրտագին բարեկամ մըն է Մխիթար Գօշի, կ'երթայ կ'ապաստանի Գետիկ եւ այսպէս «ճողպրեցաւ այն անգամ ի ձեռաց նորա» (Կիր., էջ 85):

Զաքարիա կրկին ժողովք կը գումարէ, այս անգամ Անւոյ մէջ, 1207ին: Արդ աւելի հոծ բաղմութիւն մը ժողովքին մասնակցութեան կը փութայ, բայց Մխիթար չ'երեւար, թէեւ Զաքարիա հրաւիրագիր կը զրկէ: Նա կը խնդրէ իր բարեկամ զօրավարէն նկատողութեան առնուլ իր հիւանդութիւնն, որ կրնար ծերութեան հետեւանք մը ըլլալ, եւ թէ ինքը ժողովականներու ամէն որոշման համամիտ է: Գումարեալները սակայն կը պահանջեն անոր ներկայութիւնը եւ կ'ըսեն՝ «Անհար է մեզ առանց մեծ վարդապետին տունել զայդ» (Կիր., էջ 86): Թէեւ Զաքարիա սկզբան անդ կը հակառակի անոնց բաղձանքին, բայց ի վերջոյ կը համակերպի պայմանով որ անոնցմէ հրեշտակներ յղուին Մխիթարի: Այլ եւս Գօշ առանց նկատողութեան առնելու ձեռնային խիստ ելանակը, առանց իր հիւանդութեան վրայ մտածելու ծամբայ կ'իյնայ: Շահնշահը զՄխիթար ժողովքի ներկայանալէ յառաջ իր քովը բերել կը հրամայէ: Այս պարագան ժողովականներու վրայ մեծապէս կ'ազդէ: Արդէն դարձեալ երկուքի բաժնուած էին եւ գուցէ զՄխիթար հաշտարար ու վճռատու կը ցանկոյն ունենալ: Սակայն երբ

այս տեղի կ'ունենայ, Անույ գումարումն ալ կը մնայ ապարդիւն եւ Սպասալարն աղիկամի իր կամքը յառաջ կը տանի, եպիսկոպոսներ ու քահանաներ, որոնք իրեն չեն հպատակիր, կը տեղափոխեն եւ կ'աքսորէ: Հոս ալ Մխիթարն է որ Զաքարիայի բարկութիւնը կը մեղմացնէ, բարեխօս ըլլալով անոնց համար՝ շատերուն շնորհք կը գտնէ անոր քով: Այսպէս այս կրկին ժողովքներու եւ խնդիրներու մէջ Գօշ խոհեմական գիրք մը կը գրուէ:

Հիւսիսային վարդապետներու առ Գրիգորիս կաթ. գրած թղթին մէջ (ներմուծում) կը գտնենք նաեւ Գօշի անունը: «Ամենանուստ կը գտնենք նաեւ Գօշի անունը: «Ամենանուստ աղօթողք աշակերտքս լուսաւորչական աթոռոյդ Բասիլ եպիսկոպոս, որ յարեւելք հիւսիսոյ, վարդապետ Գրիգոր Սանահին եւ հայր Յօհաննէս, վարդապետը մայրաքաղաքիս Հաղբատայ Իգնատիոս, Պետրոս, Վարդան եւ Դաւիթ, խաչատուր տիոս, Պետրոս, Վարդան եւ Դաւիթ, խաչատուր Վրդ. Հաղարծին, Մխիթար Վրդ. Խոռակերտոյ Արդ. եւ միւս Մխիթար Վրդ. Գետկոյ, Հմմտ. Ընդհանրական թուղթք Ն. Շնորհալոյ, Երուսաղէմ 1871, էջ 308 եւ Տաշեան, Յուլիան, էջ 950:

Մխիթար սիրոյ սերտ կապերով կապուած էր նաեւ իր ժամանակակից կարգընկեր եկեղեցականներու հետ: Ասոնց մէջ առաջին տեղին կը գրուէ Ստեփաննոս կաթողիկոս Աղուանից: Այս բարեկամութեան ու հնազանդութեան պատուին է Գօշի դատաստանագիրքը: Ահա թէ ինչ կը գրէ հեղինակը. «Իսկ եթէ զե՞նչ եղեւ պատճառ գրէ հեղինակը. «Իսկ եթէ զե՞նչ եղեւ պատճառ մեզ ի յայս գալ առ ի գրել: Ի բազում ժամանակաց տարակուսեալ լինէի վասն սորին իրաց: Այլ եւ հարկեաց զմեզ յայս սիրեցեալ աշակերտն սուրբ Գրոց Պաւղոս հարկեցուցիչ բանիւք եւ ոչ կարացի յանձն առնուլ պատճառ ունելով զտգիտութիւնս եւ զմարմնոյս տկարութիւնս: Եւ խորհեցայ աղաչել զայլ զօրաւորս ի սուրբ վարդապետաց, զի եւ բազումք էին առնուանիք դիտողք սուրբ Գրոց... Բայց եղեւ պատճառ գրելոյ զսա ի հարկելոյ զմեզ Տեառն Ստեփաննոսի Աղուանից կաթողիկոսի միանգամ եւ երկիցս եւ ես պատճառեցի զանձինս տկարութիւն եւ զտգիտութիւնս: Իսկ իբրեւ առաւել ստիպեաց, յանձն առի մոռացեալ զե՞մ տկարութիւնս, գիտելով թէ պարտ է հնազանդ լինել հոգեւոր հրամանի:... Եւ արդ մի դք պարսաւեսցէ զսացեալս, զի թէ տիմար դք իցէ, ուսցի եւ եթէ կատարեալ — զպակասն ի սմանէ ինքն լցցէ, զերկոցունցն պատրաստ եմք սիրելով ընդունել զկամսն: Աղաչեմ զքեզ, պատուական

գլուխդ եղեցեաց տանս Աղուանից, մի վայրապար եւ թեթեւ գործ համարիր զհոգեւոր հարկս զոր եղիր¹»:

Մխիթարայ բարեկամ էին նաեւ Հաղբատու Յովհաննէս եպ., առաջնորդն եւ խաչատուր Տարօնեցին, վանահայր Հաղարծին վանքի: Բաց ասոնցմէ անոր ծանօթներէն են Պօղոս ու Յովսէփ վարդապետները, որոնք զինքը կը յորդորեն եւ իրեն կը գործակցին դատաստանագրքին շարադրութեան²:

Դարձեալ Դաւիթ անուն վարդապետ մը, որուն մէջ «սիրելի է, Հ. Ալինեանի, զՔոբայրեցին նշմարել³, որ գրած է «ի սքանչելի վկայն Քրիստոսի Յովսէփ պատանի, որ յԱրարատայ նահանգէն, ներբողական բան գովեստի»: Այս գործքին ձեռնարկած է Դաւիթ Մխիթար անուն անձի մը խնդրանքով. «Պարտապան եմ պատուասիրել առ քեզ ըստ նազելի եւ պարկեշտագեղ պատուոյ գերագունիդ իմաստնոյ եւ ինձ յոյժ Աստուածուսոյց պատուիրանին սիրով մերձաւորիդ զգորութիւն Աստուածային Հոգւոյն եւ զանուն Մխիթարական յանձին կրողի, վկայասէր մտօք զվաղնջուցն ի ձէնք խնդիրս ընուլ զառոգանութիւնս գովեստից» (Հայապատում էջ 379): Ո՞վ է այս խնդրող Մխիթարը: Հ. Ալինեան կը գրէ (անդ էջ 379) «Գրուածի խնդրողն այլ Մխիթար մ'է, եւ հաւանօրէն Գօշն հոգահաւոր»: ԶԳօշ կը համարի նաեւ Տէր Մկրտիչեան, Հմմտ. Արարատ 1897, էջ 41: Հ. Ալինեան (տե՛ս Մատենագրական հետազոտութիւններ, Ա. հտր., էջ 53), որ իբր պապացոյց թէ Դաւիթ վարդապետն է Դաւիթ Քոբայրեցին, կը գրէ բնագրին մէջ թէ՛ ժամանակի պարագաները շատ յարմար են այդ ընդունելու եւ Մխիթար Գօշ ու Դաւիթ Քոբայրեցին կրնային իրարու հետ բարեկամութեան կապով զոգուած ըլլալ, քանի որ իրարու մերձ էին, մին գտնուելով ի Հաղբատ եւ միւսը խաչէնք, ծանօթութեան մէջ ուրիշ խնդիր մը կը հանէ, երբ կ'ըսէ «Մտադիր կ'ընեմ որ Թ. Դարու երկրորդ կիսուն կրկին Մխիթար վարդապետ կը յիշատակուի, այսպէս հիւսիս. վարդապետաց առ Գր. Տղայ թղթին մէջ միւս վարդապետաց հետ կը յիշուին Մխիթար վարդապետ Խոռակերտոյ եւ միւս Մխիթար վրդ. Գետկոյ... Հետեւաբար հարկ չկայ անպատճառ Գօշ վար-

¹ Բացտաման, Մխիթար Գօշի դատաստանագիրք Հայոց, էջ 16-18:

² Անդ, էջ 74:

³ Մատենագրական հետազոտութիւններ, Ա. հտր., Վիեննա 1922, էջ 52:

դապետը նկատել (անդ, էջ 52): Ինչ մեծապէս հաւանական է թէ Գօշն է այդ Մխիթարը, ժամանակը կը համաձայնի եւ Դաւթի խօսքերը Գօշի պէս ուսեալ անձ մը իրենց առջեւ կը նկատեն: Միթէ Մխիթար Գօշ չէ՞ որ «վկայասէր մտօք» գրած է Խոստորովի վկայաբանութիւնը, որուն մասին վերջէն:

Վարժէ հոս յառաջ բերել Մխիթարայ Դատաստանագրքի «Յիշատակարան սակաւութիւնը կը պատմէ նա անձամբ թէ ուր գտնուած է ժամանակ մը եւ ուր կը յիշուին կրկին իր ծանօթները: Բայց ձեռնարկութիւն մեզ յայտնի իրողութիւն եղեւ ի թուականութեանս Հայոց ՈԱԳ եւ շրջանին երթալոյ ի բաց ճԱ. որ կոչի փոքր, իսկ Հոռոմին ՆԵ. յամս անիշխանութեան մերոյ ի վաղընջուց ի ժամանակի մնացելոց սակաւ իշխանաց ի կողմանս Խաչենոյ, ընդ ժամանակս անուանելոյ Հասանայ կրօնաւորեցելոյ եւ որդւոյ նորա Վախտանգայ ի դղելին, որ անուանի Հայթերը, գլխաւորի այլոց իշխանաց եւ կողմանցն Վիւղիկիայ մեծի իշխանին Ռուբէնին, յամի յորում մեռաւ յաղթող թագաւորն Վրաց Գէորգի, ի հայրապետութեան Տեառն Գրիգորի Հայոց Մեծաց եւ ի դիտապետութեան Տեառն Ստեփաննոսի տանս Աղուանից յաշխարհիս Առանայ, ի նահանգիս, որ կոչի մայրաքաղաքին Գանձակ, յանապատս եւ յեղբայրանոցս անուանեալ Դասնոյ, սկզբնաւորեալ ի լեռնակողմն մենաստանին կոչեցելոյ Հոռոմաշէն, ընդ հովանեաւ սրբոյ եկեղեցեաց կուսաստանացն յիշեցելոց¹, ձեռնտուութեամբ հօր Յովսէփոյ եւ Պաւլոսի յորդորմամբ յառաջարկութիւնս²:

Մխիթար բարեկամներու հետ ունեցած է նաեւ թշնամիներ եւ նախանձորդներ: Բացի արտաքին գէշ պարագաներէ այս կ'անարկէ Վեներտիկեան մէկ հին Դատաստանագրքի հետեւեալ յիշատակարանը³ «Փառք... որ ետ զդադարումն աստանաւոր տալ գրոցս դատաստանի, զի թէ եւ յառաջագոյն ասացաք գրելով զսակաւ յիշատակարանն, եթէ աւարտուամն սորա ոչ է: Սակայն այժմ մեք հանգուցանել կամեցաք, գրելով ըստ կարի, ոչ խափանել զայլոց, որք կամին գրել եւ յաւելուլ: Եւ թէպէտ յամի յորում սկսաք գրեցաք զեղբաւ չափս դատաստանի: Սակայն

յաղագս հալածանաց, որ եհաս մեզ, ընտանի եւ ոչ աւտար, յապաղեաց գրել զյիշատակս զաստիկ» (Բաղմալէպ 1848, էջ 119—120): Այս յիշատակարանին հարազատութիւնն երկբայական կը թուի:

Ձեռքերնիս հասած եւ Վիրակոսի պատմութեան ետեւն իրրեւ յաւելուած տպուած է «Միւս եւս. պատմութիւն սքանչելի վարդապետին Մխիթարայ»¹: Հոս կը պատմուի թէ Գօշ վարդապետը Գետիկ վանքի Ս. Աստուածածին եկեղեցին շինեցն վերջ Ուտե (1196) կամ Ուտե (1198) թուականին կը բաղձայ Պաղեստին սուրբ տեղերը, գլխաւորաբար Երուսաղէմ, այցելութեան երթալ: Իրապէս ալ ուխտագնացութիւնը կը կատարէ եւ կը վերադառնայ առանց որ եւ իցէ վտանգի ու միջադէպի: Իր վերադարձի ուրախառիթ լուրը կը հասնի Գետիկ եւ միաբաններէն ոմանք դիմաւորելու երթալով կը պատմեն անոր թէ ինչպիսի սաստիկ սով մը իր բացակայութեանը զերեւք նեղած է եւ թէ այդ անկոչ հիւրը միաբաններու կէսը բռնի գերեզման իջուցած: Ապա կը հաղորդուի թէ Մխիթար այս առիթով ինչ տեսիլքներ կ'ունենայ եւ ինչպիսի հրաշքներ կը գործէ, դարձեալ թէ ինչպէս իր որդիներուն յուսակուոր սրտերը կը մխիթարէ սիրաբորբոք խօսքերով: Բաց աստի յարութիւն կու տայ իր Պօղոս աշակերտին: Այս պատմութիւններն ու աւանդութիւնները հաւանականաբար անոր բարեպաշտ որդիներն ու ժողովուրդը կարկտած են անոր անբասիր վարուց հովանւոյն տակ: Այս ամբողջ պատմութեան յերեւան կու գայ Գօշի հոգն ու խմանքն իւր աշակերտներու հանդէպ: Ասկէ կ'իմանանք թէ Գետիկայ միաբաններու թիւը մեծ էր:

1213ին կը հանդիպի Մխիթարի մահն, ինչպէս Վիրակոս կը հաւատայ «Եւ եղեւ վախճան նորա ի վեցհարիւր վաթսուն եւ երկու թուին», էջ 115: Մահուան նոյն թուականն ունի նաեւ Վարդան, որ Զաքարէ ապաստարի վախճանը հաղորդելէն ետքը՝ «ի վեց հարիւր եւ մի թուին» կը յաւելու «Եւ զինի միոյ ամի կատարեցաւ սուրբ սքանչելի վարդապետն Մխիթար, մականունն Գօշ, Գանձակեցին, էջ 140²:

¹ Մարաշեան օրինակ մը ունի «կուսանացն յիշեցելոց» քոր Ալիշան կը սրբագրէ, տե՛ս Բաղմալէպ 1848, էջ 43:

² Բաստամեան, անդ, մէջ 69 եւ Բաղմալէպ 1848, էջ 43:

³ Հմմտ. նաեւ Բաստամեան՝ Դատաստանագրքի, էջ 69:

¹ Այս պատմութիւնը ամբողջապէս, բայց աւելի տակ հատընտիր կարելի է տեսնել Յայսմաւուրքներու մէջ. Հմմտ. ի մէջ այլոց Սմբատեան Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, Վաղարշապատ 1895, էջ 380—386 եւ Տաշեան, Ցուց. հայ. Ձեռ. Մխիթ. ի Վիեննայ, էջ 182:

² Neumann Գօշի մահը կը դնէ 1207ին, հմմտ. Ver-

Այսպէս մէկ տարի վերջ իր խոստովանորդւոյն Մխիթար կը հետեւի «ի խորին ծերութեան», գուցէ Զաքարիայի կորուստը բազմադիւն վարդապետին մահը կը փութացնէ: Բաստամեան կը գրէ (Գօշի Դատաստանագրքի հրատարակութեան յառաջաբանին մէջ, էջ 91) «Կարելի է թէ նա հասաւ արեղարդ ծերութեան, 70—80 տարեկան, կամ գուցէ աւելի»¹:

Կ'երեւայ թէ զգալով նա իր մօտահաս մահը, Մարտիրոս վարդապետի կը յանձնէ Գեօտիկ վանքի առաջնորդութիւնը եւ կը գրէ «Կտակ առ մեծ հաղարապետն Իւանէ»:

Մարտիրոս վարդապետը, այժմ առաջնորդ, մեծազորդ հանդիսութեամբ ու շքով Մխիթարի թաղման արարողութիւնը կը կատարէ եւ անոր մարմինը Համբարձման եկեղեցւոյն դրան առջեւ ամփոփել կը հրամայէ (Կիր., էջ 114):

Դարեր վերջ Մմբատեան իր ընկերներովը կու գայ Գեօտիկ վանք այցելութեան, կ'որոնէ Մխիթարայ գերեզմանաքարը եւ չի յաջողիր զայն գտնելու, թէեւ երկար ատեն կ'աշխատի (Գեղարքունիք, էջ 178): Այսպէս մոռացութեան ու կորստեան կը մատնուի Մխիթարի շիրիմը, բայց անոր անունը անմահ կը մնայ դարէ դար, սրտէ սիրտ: Անկա մեր մատենագիրներու մէջ մեծ դէմքերէն է: Ոչ թէ գրչով միայն, այլ եւ գործքով մեծ մարդ է: Իր դարուն Հայաստանի մէջ ճոխութիւն ունեցող անձ մըն էր: Գեօտիկ վանքն իր չքնաղ արուեստովն ու զարգացումովը կոթող մըն է անոր անդու գործունէութեան, իսկ թողուցած գրութիւններն մէյ մէկ պայծառ արտաբայութիւններ անոր ընտիր կրթութեան:

(Շարտահանկելի:)

Հ. Հ. ՈՍԿԵԼԱՆ



such einer Geschichte der arm. Literatur, Leipzig 1836, էջ 176: Հետեւած է Սոմայեանի, հմտ. Quadro, էջ 100:

¹ Այսպէս կը թուի թէ Մխիթար տկար կազմուածք մ'ունեցած է եւ շատ անգամ տառապած է հիւանդութիւններով: Իր դատաստանագրքին նախադրութեան մէջ մի քանի անգամ այս կ'ակնարկէ, հմտ. Բաստամեան, էջ 15, 49, նաեւ Կիրակոս, էջ 86: Մխիթար շատ նեղուած է նաեւ պանդուխտ կեանքէ, տեսնել դարձեալ Բաստամեան, էջ 89:

ԻՍԼԱՄԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԳԻՐԲ ՀԱՐՑԱԼՆՑ

ՁԵՌԱԳԻՐԲ ԵՐՈՒՍԸՂԵՄԻ Ս. ՅԱԿՈԲԱՅ
ՄԱՏԵՆԱԳՐԱՐԱՆԻՆ

(Շարտահանկելի:)

2. — Ա. = ԱՌԱՋԻՆ ընդարձակ օրինակ, որ Առաջին Եզր Եղաւ համեմատութեան Հ.ի հետ: — Թիւ 1155: Գրուած 1413 ին:

ԵՐԵՄՔ 802: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18.3×14: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ 14¹/₂×10¹/₂ երկսիւն. եւ սիւնակներ զծուած սուսքով: — ՏՈՂՔ 35, էջ 126ը 30, թուղթը տողաշարուած: — ՆԻՒԹ՝ բամպակեայ թուղթ, դեղնելու սկսած, կիսափայլ: — ԿԱԶՄ՝ կաշեփայտ, կողքերը զարդարուն կաղապարներով. կողքերուն ներքը նմանագոյն մետաքսէ պատուառ փակցուած: Կրկին ծարմանդով. որը ինկած են. կտրուածքները ներկուած մութ կարմիրով: — ՄԱԳԱՂԱԾԱՅ ՊԱՆԳՆԱՅ՝ երկերկու թերթ. երկիջեան մեծադիր Աստուածաշունչ մատենանէ մը, որ մէջտեղէն ծալուելով եւ եզերքներէն կտրուելով յարմարցուած է Ձեռագրիս մեծութեան չափին: Այս երկու թերթերը կը բովանդակեն Դանիէի Մարգարէութենէն զլուինքը: Գրչութիւնը մետրական, «երկաթագիր» ըսուած ծելին մօտ. գրերուն անկիւնները գրեթէ հարթուած եւ կտրցած են: Սկիզբը դրուած թերթին ներքին երկու սիւնակներ կը բովանդակեն. 12. սիւնակ. ա. տող [վասնի] զորորդի զի ա[ռանել]. Դանիէ Է. 19. իսկ վերջին տող [թա]կաւորութիւն չորրորդ կաց[ցէ], 23: Բ. սիւնակ, ա. տող «կերիցէ զամենայն [երկիր], 23. իսկ վերջին տող «տուաւ սրբոց բարձրելոյն», 27: Վերջը դրուած թերթին ներքին երկու սիւնակներ. Ա. սիւնակ, ա. տող [հանդէ]ք Նորա իբրեւ [զօհն], Է. 9. իսկ վերջին տող «եւ ահա ընդ ամբս երկնից», 13: Բ. սիւնակ, ա. տող «մատուցաւ առաջի նորա», 13. իսկ վերջին տող [բարձ]րելոյ, եւ կալցին զն[ա], 18: Պահպանակներուս միւս երեսները աղծատած են մասամբ եւ դժուար ընթերցելի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ. թէեւ տեղ տեղ, էջ 65—74, 763 եւ չը., ցեցակեր վարի լուսանցքներու վրայ: Աշխատած են Յիշատակարանը եղծել եւ յաջողած են մասամբ: — ԳԻՐ՝ մանր բոլորգիր, էջ 36—37 նօսք. 137—138, տեղ տեղ կանոնաւոր, գոր օր. էջ 500 եւ չը., տեղ տեղ անկանոն, կարծես արդիւնք արագագրութեան: — ԶԱՐԴԱԳԻՐՔ՝ քանի մը հատ միայն, մութ կարմիրով, անարուեստ քաներ: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ սուսքով, ինչպէս նաեւ զխազիրք եւ չըց. ու Պատուախանդ: — ԿԻՍԼԱՅԻՐՔ՝ ԵՆ ԼՈՒՍԱՆՑԱԳՐՔ՝ մութ կարմիրով, շատ սովորական քաներ, էջ 5, 10, 80, 197, 260, 304, 371, 430, 470, 670: — ՆԿԱՐՔ՝ չկան, բայց կարելի է նշանակել սուսքով զծուած խորդակը, որուն կենդրոնը երկիր եւ լուսին իր քառակ փուխով չորս հաւասար կէտերու վրայ, էջ 240. եւ Վկայութեան խորանին յատակագիծը, էջ 397: — ԴԱՏԱՐԿ՝ սկիզբը երկու թուղթ, էջ 1—4: Առաջին էջին վերի անկիւնը Գրչէն. «աւգնեմ ինձ տէր յիսուս ի բա[ր] ըն եւ հոգի քո սուրբ եղիցի ի վերայ իմ, եւ աշն հայրա[ւ] կան հոգեմասցի ինձ. | ամէն»: Եւ ուրիշներէ՝ զբշի խաղեր: էջ 5. Բ. սիւնակին վարի մասը, ուր քերուած քերթուած տող մը երկու՝ կայ, էջ 239, Բ. սիւնակին վարի կէսը, էջ 396, Բ. սիւնակ, էջ 670, Ա.